ՄԻԱՍՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ
2021

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ
ԵՎ
ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍՏ 2

Խմբի համարը

Նստարանի համարը

Հարգելի՛ դիմորդ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդա՛ յուրաքանչյուր առաջադրանք: Եթե չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող ես դրան անդրադառնալ ավելի ուշ:

Թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը կարելի է օգտագործել սևագրության համար:

Ուշադի՛ր եղիր պատասխանների ձևաթուղթը լրացնելիս.

- ընտրովի պատասխանով առաջադրանքներում քո ընտրած տարբերակի համարին համապատասխանող վանդակում դի՛ր X նշանը (միևնույն սյունակի մեկից ավելի վանդակներում ցանկացած նշում կհամարվի սխալ),
- 45-50-րդ և 66-68-րդ առաջադրանքներում՝ յուրաքանչյուր առաջադրանքի համապատասխան համարների տակ, դի՛ր X նշանը:

Մաղթում ենք հաջողություն:

Ա մակարդակ

1 **Ո՞ր շարքի բոլոր բառերում կրկնակ բաղաձայն կա:**

1) մ-կատարափ, հետաք-ին, զ-ել, ա-կուն
2) ֆի-ական, միատա-, ու-աբերձ, հո-ուհի
3) տո-ա, պ-ահողմ, ըն-արմանալ, ու-անկյուն
4) այ-ուբեն, բա-ադ, բնo-ան, եր-ենցաղ

2 **Ո՞ր շարքի բոլոր բառերում է գրվում *ղ*:**

1) փ-ձկալ, տա-տկալի, դժո-ք, փայծա-
2) թ-պոտ, ա-բյուր, ու-տափուշ, ա-տոտել
3) գա-տնիք, գա-թoջախ, մա-թանք, ա-ճատել
4) սանդու-ք, հա-ճապակի, ցնցու-, թու-թ

3 **Ո՞ր շարքի բոլոր բառերն են երկվանկ:**

1) բժիշկ, արկղիկ, երբևէ
2) սպի, էակ, տկար
3) վայրէջք, կռունկ, սյուն
4) կարծր, բնաբան, գրիչ

4 **Ո՞ր շարքի բոլոր բառերում հնչյունափոխություն կա:**

1) հնամենի, ուխտադրուժ, վերջնական, առվեզր
2) բազմաթիվ, ամրակուռ, չարագուշակ, վիմագիր
3) երեսնամյա, կատվառյուծ, վրիպակ, քմահաճ
4) աշնանացան, կառապան, պատվիրել, փոթորկահույզ

5 **Ո՞ր շարքի բոլոր բառերի ընդգծված *n*-ն է արտասանվում *o*:**

1) ան**n**րակ, ան**n**ողոք, ենթա**n**րովայնային, **n**վևէ
2) ան**n**րոշ, սառն**n**րակ, արև**n**րդի, կրծ**n**սկր
3) տար**n**րոշել, հնա**n**ճ, ան**n**րսալի, ութ**n**տնուկ
4) քաջ**n**րդի, ան**n**ղնաշար, ան**n**ողորմ, արջա**n**րս

6 **Ո՞ր տարբերակում է տառակապակցության թվային արժեքը ճիշտ նշված:**

1) ԿԷ-57
2) ՂԵ-96
3) ՀԴ-74
4) ՁԳ-63

7 **Ո՞ր շարքի բոլոր բառազույգերն են կազմված հոմանիշներից:**

1) պիրկ–ձիգ, լաջվարդ–կապտագույն, անընտգյուտ–անթերի
2) լեգենդ–ավանդազրույց, բարվոքել–լավացնել, խանդաղատանք–սեթևեթանք
3) շաղակրատ–շատախոս, բուրվառ–խնկաման, արահետ–բացատ
4) արտասվախառն–լացակումած, խոռոչ–խորշոմ, ամբողջ–բովանդակ

8 **Ո՞ր տարբերակում բառի սխալ բացատրություն *չկա:***

1) ***լերկ*** – բուսականությունից զուրկ, ***հովեկ*** – զեփյուռ, մեղմ քամի
2) ***անկարգել*** – ջրի հոսանքը փակող պատնեշ, ***դերձան*** – կարի թել
3) ***ոստրե*** – թանկարժեք քար, ***հրովարտակ*** – թագավորի գրավոր դիմում
4) ***դարակազմիկ*** – չափազանց նշանակալից, ***ակնարկ*** – ոչ ուղղակի ասված խոսք

9 **Ո՞ր տարբերակում դարձվածքի իմաստի սխալ բացատրություն *չկա:***

1) ***ուրիշի երգը երգել*** –սեփական կարծիք չունենալ, ***հաշվի նստել*** – չարաչար պատժել
2) ***մի սանրի կտավ*** – միևնույն գործին նվիրված, ***պղտոր ջրում ձուկ որսալ*** – խառնաշփոթ վիճակից օգուտ քաղել
3) ***ջուրը գցել*** – անօգուտ վատնել, ***սպիտակ դրոշ բարձրացնել*** – պայքարի կոչ անել
4) ***ձեռքերը շփել*** – հաջողությունից ուրախանալ, ***հացի մեջ աղ չլինել*** – երախտիքը չգնահատվել

10 **Ո՞ր տարբերակում են ճիշտ նշված բոլոր այն բառերի համարները, որոնք գործածված են փոխաբերական իմաստով:**

Ճամփան 1. ***ոլորուն*** *դեռ իջնում էր վար՝*
Դեպի դաշտերի 2. ***գիրկը****, ուր չկար*
3. ***Մարդկային*** *աղմուկ ու երգ ու շառաչ,*
Երազ էր կարծես՝ անապատ դարձած:
Ու լուռ էր այնպես: Վայրկյանն էր 4. ***հոսում****:*
Ու հին լռության 5. ***լաբիրինթոսում***
6. ***Սպասում էին*** *դաշտ, հովիտ ու քար,*
Կարծես թե մեկը 7. ***այցի պիտի գար:***

1) 1, 2, 3, 5, 6
2) 1, 3, 4, 6, 7
3) 2, 4, 5, 6
4) 2, 5, 6, 7

11 **Ո՞ր շարքի բոլոր բառերն են կազմությամբ ածանցավոր:**

1) ասմունք, հրաժեշտ, ցրիչ, ընձենի
2) դյուրին, ալեծածան, փական, բառացի
3) ծորակ, սմբուկ, թռչուն, մակբայ
4) հակակրանք, պարագլուխ, տրամադիր, լծկան

12 **Ո՞ր շարքի բոլոր բառերում հոդակապ կա:**

1) այգեգործ, բարեգութ, ալեծուփ, հմայագեղ
2) համաձայն, առևտուր, դիմանկար, ձյունագես
3) թախծանուշ, ոսկեվառ, դրամաշնորհ, կարեվեր
4) նկարազարդ, գեղաշուք, քարածուխ, չարախոս

13 **Ո՞ր շարքի բոլոր բառերն են ենթարկվում *վա* հոլովման:**

1) ամիս, վայրկյան, վաղուց, գիշեր
2) շաբաթ, կեսօր, ոոպե, առաջ
3) նախնադար, տարի, առավոտ, երեկ
4) երբ, ամառ, այսօր, ժամանակ

14 **Ո՞ր շարքի բոլոր բառերի հոգնակի թիվն է կազմվում *-ներ* վերջավորությամբ:**

1) հայագետ, գործազուրկ, մարդասեր, ծաղկաթերթ
2) քարտաշ, օրացույց, շարասյուն, ռուս
3) խմբագիր, ժանր, նախագահ, անտառահատ
4) երկնաքեր, սևամորթ, նետաձիգ, ակնաբույժ

15 **Ո՞ր շարքի բոլոր բառերն են ածականներ:**

1) բաղձալի, ամենևին, վայելուչ, մկանուտ
2) առաջնային, մշտապես, բարձրորակ, հրաշալի
3) ավելորդ, վճռորոշ, խավարամած, հմայիչ
4) մարդախույս, չվող, միակ, պարզունակ

16 **Ո՞ր շարքի բոլոր բայերն են *ա* խոնարհման:**

1) հագեցել, ծուլանում, մոտեցավ, դարձել
2) ելավ, կխորանա, բարձրանում, խաղացած
3) մռնչացող, ասաց, փութացող, զվարճանում
4) զայրացել, շողալու, լիացած, հասավ

17 **Ո՞ր շարքի բոլոր բառերն են դերանուններ:**

1) այսինչ, մի քանի, մեկը, քառորդ
2) ինչու, ոչ ոք, քանի որ, մյուս
3) որպիսի, սույն, ողջ, ոմն
4) ով, նույնպիսի, ոչինչ, բազմիցս

18 **Ո՞ր շարքի բոլոր բայերն են պարզ (առանց բայական ածանցի):**

1) կապկպել, փոշոտել, մեղանչել
2) բռնել, վատնել, փշրտել
3) օգնել, գլորվել, հավատալ
4) թարգմանել, վիճարկել, ուշանալ

19 **Ո՞ր տարբերակում բառի ձևաբանական վերլուծության սխալ *չկա:***

Դեռ մի քանի ժամ կար մինչև ճաշը, բայց դահլիճն արդեն կազմ ու պատրաստ էր. պատուհանների ու դարակների մետաքսյա վարագույրները խնամքով վեր էին բարձրացրած, և նրանց միջից երևում էին բոլոր թանկագին անոթները:

1) ***կար*** – պակասավոր բայ, ըղձական անցյալ, ***բայց*** – համադասական շաղկապ
2) ***մինչև*** – ստորադասական շաղկապ, ***բոլոր*** – որոշյալ դերանուն
3) ***դեռ*** – ժամանակի մակբայ, ***երևում էին*** – սահմանական եղանակ, չեզոք սեռ
4) ***բարձրացրած*** – պատճառական բայ, հարակատար դերբայ, ***խնամքով*** – ձևի մակբայ

20 **Տրվածը ինչպիսի՞ նախադասություն է:**

Ի՞նչ ես գազազում, իմ վիրավո՛ր սիրտ:

1) բայական անդեմ
2) անենթակա
3) թերի
4) անվանական անդեմ

21 **Ո՞ր նախադասության մեջ վերաբերական *չկա:***

1) Այցելի՛ր, գոնե երա՛զս բեր:
2) Արդյոք ո՞ւր ես, խորհրդավո՛ր արշալույս…
3) Գուցե ես լամ բախտիդ համար, իմ անգի՛ն:
4) Ո՞նց է ժպտում իմ հոգին Չարին, բարուն, ամենքին:

22 **Ո՞ր նախադասությունն է համապատասխանում տրված գծապատկերին:**



1) Քանի որ նրա շուրջը ամեն ինչ գեղեցիկ էր, ամեն ոք ձգտում էր դուր գալ նրան՝ շարունակ հաճոյանալով, որպեսզի ինքն էլ ուրախ և երջանիկ զգար, ինչպես հրեշտակներն են անհոգ ու երջանիկ:
2) Մինչ նա խոսում էր, ես նայում էի տիկին Պիրսոնին և սպասում, թե ինչ է պատասխանելու, որ ես փարատեմ իմ կասկածները:
3) Հենց որ նստեց նստարանին, սկսեց խոսել Փարիզի մասին, բայց ամբողջ ընթացքում չէր նկատում իմ զայրույթը, որ առաջացավ այն պահին, երբ նա սկսեց խոսել:
4) Լինելով մարմնեղ և գունատ՝ նա ինձ երբեք դուր չէր եկել և չէր գրավել, քանի որ նրա մեջ աստիճանաբար հայտնաբերում էի այնպիսի գծեր, որոնք ինձ տհաճ էին:

23 **Ո՞ր նախադասության մեջ բացահայտիչ կա (նախադասությունները կետադրված չեն):**

1) Այնպես ես գալիս այնպես գնում Ով դու արարող և ավերիչ:
2) Գալիս ես որպես իրարանցում Եվ անց ես կենում որպես երազ:
3) Ինձ դաշտային երկրի բնակչիս վրա լեռը մի առանձնակի դյութական տպավորություն գործեց:
4) Նա իմ առաջին սերն էր առաջին սերը որ երբեք չի մոռացվում:

24 **Ո՞րն է տրված նախադասության տրամաբանական ճիշտ շարունակությունը:**

Իսկ հոկտեմբերի տասնիններին՝ ճամփորդության չորրորդ ամսում, ձյունն այնպես առատորեն տեղաց, ...

1) որ իրար խառնեց ճամփա ու կածան:
2) ասես իրար խառնելով ճամփա ու կածան:
3) կարծես չպիտի իրար խառնվեին ճամփա ու կածան:
4) որով իրար խառնվեցին ճամփա ու կածան:

25 **Ո՞ր տարբերակը տեղադրելու դեպքում քերականորեն և տրամաբանորեն ճիշտ նախադասություն կստացվի:**

Ամայի արտերի ……. անցնում էր Լառ-Մարգարը, ջուր տալիս ծարավ հասկերին:

1) մեջերից
2) միջով
3) մեջ
4) միջև

26 **Ո՞ր հատվածում բաղադրյալ ստորոգյալ *չկա:***

1) Թանապուրի տաք գոլորշին
   Գերանին առնում
   Եվ սյունն ի վար գլոր-գլոր
   Ուլունք էր դառնում:
2) Նայի՛ր, դստրի՛կ, իշխանազուն
   Էս քաջերին լայնալանջ,
   Այժմ պիտի հանդես դուրս գան,
   Պայքար մտնեն քո առաջ…
3) Ինձ համար հերիք էր արդեն
   Ժպտալդ ու լալդ…
4) Եվ առավել լավ չէ՞ արդյոք,
   Որ մարդու ոտքը սայթաքի,
   Քան թե լեզուն:

27 **Ո՞ր տարբերակում են ճիշտ նշված այն թվերը, որոնց տեղում բուք պիտի դրվի:**

Վահանը Մոսկվայից չհեռանալու պատճառ իսկապես ուներ(1) նա նամակով դիմել էր Էջմիածին(2) Գևորգյան ճեմարանի վարչությանը(3) խնդրելով(4) իրեն ուղարկել արտասահման(5) մասնագիտության մեջ խորանալու: Մոռածում էր(6) կընդառաջեն իրեն(7) խոստումնալից բանաստեղծին:

Սակայն որքան էլ զարմանալի է(8) ճեմարանից եկավ մերժողական պատասխան և նա տեղի տալով Սուսաննայի խնդրանքին(9) մեկնեց Ստավրոպոլ:

1) 2, 3, 5, 6, 7
2) 1, 2, 4, 6, 8
3) 2, 3, 4, 7, 8
4) 1, 2, 5, 6, 9

28 **Ո՞ր նախադասության մեջ տեղի պարագա *չկա:***

1) Անդոն երբեմն ինձ հարցնում է իմ տեսած քաղաքների, իմ կարդացած գրքերի մասին:
2) Գյուղից ներքև գետն արմունկ է կազմում, հունը թեքում ու կորչում:
3) Կուրծքը սպիտակ ջրածտերը թռչում են քարից քար, կրծքերը երերացնում, ծվծվում:
4) Ձիերը ահ ու սարսափով կանգնում էին կիսաքանդ կամրջի առաջ՝ վախենալով նրանով անցնելուց:

29 **Թվերի դասավորության ո՞ր տարբերակն է համապատասխանում տեքստի տրամաբանական և քերականական ճիշտ կառուցվածքին:**

1. Նա դեռ շատ երիտասարդ էր, երբ ձեռնարկեց անհավատալի դժվար մի աշխատանք: Մի քանդակագործ ավելի քան հինգ մետր բարձրությամբ մարմարե բեկորից սկսել էր արձան քանդակել, բայց փչացրել էր մարմարն ու այդպես էլ թողել: Լավագույն վարպետներն անգամ հրաժարվում էին այդ խեղված մարմարից քանդակ ստեղծելուց:
2. Քանդակագործն իր հերոսին պատկերել է մարտի պատրաստվելու պահին: Լայն բացած աչքերով նայում է նա հսկային՝ ձախ ձեռքում սեղմած պարսատիկը:
3. Միքելանջելոյի տաղանդը բավականին վաղ է դրսևորվել, և նա, հակառակ հոր կամքի, որոշել է նվիրվել արվեստին: 13 տարեկան էր, երբ դարձավ նկարչի աշակերտ, և շուտով հոյակապ քանդակների հեղինակ էր արդեն:
4. Միքելանջելոն հանձն առավ այդ գործը: Երեք տարի անց Դավիթի քանդակը պատրաստ էր: Հինավուրց առասպելը պատմում է, որ մենամարտում Դավիթը հաղթում է իր ժողովրդի թշնամուն՝ հսկա Գողիաթին:

1) 3, 1, 4, 2
2) 2, 3, 4, 1
3) 2, 3, 1, 4
4) 3, 4, 1, 2

30 **Պատկերավորման-արտահայտչական ո՞ր միջոցը գործածված *չէ:***

Հնկիկն առվին խուտուտ տվեց,
Եվ առուն՝ պարզ ու անբիծ,
Քրքջալով ուշաթափվեց
Ու ձորն ընկավ քարափից:

1) անձնավորում
2) շրջադասություն
3) համեմատություն
4) հանգավորում

31 **Թվերի ո՞ր դասավորությունն է համապատասխանում բանաստեղծության հատվածների հաջորդականությանը:**

1. Նորից ես մանուկ եմ այսօր,
   Դրախտ է նորից իմ հոգում
2. Արևը հանգչում է հեռվում,
   Գետից բարձրանում է մշուշ
3. Հեքիաթդ անվերջ օրորում,
   Իլիկդ խոսում է անուշ
4. Նայում եմ, մինչև որ անզոր
   Գլուխս ծնկիդ է թեքվում

1) 4, 1, 2, 3
2) 4, 2, 1, 3
3) 2, 1, 3, 4
4) 2, 1, 4, 3

32 **5-րդ դարի հեղինակներից որի՞ ստեղծագործությունն է ներկայացնում է հայ նախարարական տոհմերի ծագումնաբանությունը:**

1) Փավստոս Բուզանդի
2) Ղազար Փարպեցու
3) Ագաթանգեղոսի
4) Մովսես Խորենացու

33 **Նշվածներից ո՞վ ում է անիծում՝ ասելով. *«Անմահ ըլնես, անժառա՛նգ»*:**

1) Քեռի Թորոսը՝ Մեծ Սիերին
2) արտատեր պառավը՝ Դավթին
3) Դավիթը՝ Փոքր Սիերին
4) ալևոր ծերունին՝ Մըսրա Մելիքին

34 **Ինչպե՞ս է Գ. Զոհրապի «Զաբուղոն» նորավեպի նույնանուն հերոսը բանտ ընկնում:**

1) Նրան մատնում է իր սիրած աղջիկը:
2) Բռնվում է մեծ գողության մեջ:
3) Սպանում է սիրած աղջկա հետ կապված տղային:
4) Կռվի է բռնվում ոստիկանության հետ:

35 **Ո՞րը Ռաֆֆու՝ ազգային-ազատագրական պայքարին նվիրված վեպերից *չէ:***

1) «Խենթը»
2) «Կայծեր»
3) «Զալալեդդին»
4) «Ոսկի աքաղաղ»

36 **Ա. Շիրվանզադեի «Պատվի համար» դրամայի ո՞ր հերոսի խոսքն է.**

«Ի՞նչ պիտի մտածեն. կասեն, որ Էլիզբարյանը գող էր և այժմ, դատաստանից վախենալով, գողացածը ետ է տալիս: Արի ու այն ժամանակ երևացիր հասարակության մեջ»:

1) Անդրեաս Էլիզբարյանի
2) Սաղաթելի
3) Բագրատի
4) Սուրենի

37 **Ո՞ր շարքում են նշված Դ. Դեմիրճյանի «Վարդանանք» վեպից վասակյանների անունները:**

1) Արտակ Մոկաց, Ղևոնդ Երեց
2) Գաղիշո Խորխոռունի, Արտակ Ռշտունի
3) Կոդակ, Սրվանձտյա Գարեգին
4) Ատոմ Գնունի, Դավիթ սեպուհ

38 **Ո՞ր շարքի բոլոր ստեղծագործությունների հեղինակն է Ե. Չարենցը:**

1) «Դանթեական առասպել», «Էլի գարուն կգա», «Գանգրահեր տղան»
2) «Դեպի լյառը Մասիս», «Անվերնագիր», «Իջնում է գիշերն անգութ ու մթին»
3) «Ամբոխները խելագարված», «Հայրենիքիս հետ», «Վահագն»
4) «Հավերժական սերը», «Տաղ անձնական», «Մահվան տեսիլ»

39 **Տրված բառերից քանիսո՞ւմ ուղղագրական սխալ կա.**

բաղդատել, բամբեր, դշխուհի, անհողդհողդ, երկվորյակ, դիցուկ, գորգոռոց, ապաշխարհել, կորնթարթ, փեղկ:

40 **Նշվածներից քանի՞սն են Նահապետ Քուչակի հայրենները:**

«Կելնեմ, կու գնամ, մանկտի՛ք», «Քանի՞ ու քանի՞ ասեմ», «Դուն էն գլխեն իմաստուն իս», «Երեկ ցորեկով բարով», «Եկին ու խապար բերին», «Տու՞ր ինձի, Տե՞ր, ուրախությունն անանձնական», «Աշխարումս ախ չիմ քաշի»

41 **Ընդգծվածներից քանի՞սը դերբայական դարձված *չեն* (նախադասությունները կետադրված չեն):**

- **Մի ակնթարթ չանցած** հիվանդը կարկառեց ձեռքերը և գրկեց աստվածուհու ծնկները:
- Ադամը որ հեռվում կանգնած հափշտակված նայում էր Լիլիթին **սիրտ առնելով** մոտեցավ նրան:
- Գնաց լճափ թափառեց պուրակներում **պրպտելով ամեն թուփ ու մացառ**:
- **Հոգնած ուժասպառ** հասավ նա Բուխարայի պարիսպներին:
- **Տիեզերքի ամենատես աչքից վատ արարքներդ ծածկելու համար** չես կարող պատսպարվել ոչ ծովի անդունդներում ոչ լեռների խորին վիհերում:

42 **Տրված բառազույգերից քանի՞սն են կազմված հականիշներից.**

երանգավառ–տամուկ, վեհանձն-փոքրոգի, խոժոռվել–ժպտալ, բանուկ–սակավագնաց, առաքուր–անջրպետ, պարպել–լիցքավորել, կարծրատիպ–ազատախոհ:

43 **Տրված նախադասության մեջ քանի՞ կապ կա:**

Հոր տնից վերադառնալուն պես Սանդուխտը սկսեց արագ-արագ հավաքել երեխայի կողմից տնով մեկ թափթփած իրերը, նախքան սկեսուրը կգար եկեղեցուց:

44 **Նախադասություններից քանիսո՞ւմ ստորակետ *չպիտի* դրվի (նախադասությունները կետադրված չեն):**

- Այդ լուրը կարծես թե նրան այլայլեց և մի թեթև կարմիր գույն պարուրեց նրա դեմքը:
- Երկրագնդի վրա ապրող մեծաթիվ թե փոքրաթիվ բոլոր ժողովուրդների թիվը հասնում է մոտ երկու հազարի:
- Նամակը վերցնելու համար նա խոնարհվեց և միևնույն ժամանակ մի գողունի հայացք ձգեց վրաս տեսնելու դեռ նայում եմ արդյոք իր վրա:
- Մի տարօրինակ կառույց էր դա մեկուսի կանգնած բարձունքին և գրավում էր բոլոր անցորդների ուշադրությունը:
- Պառավը կարծում էր Աղունը կախարդել է իր որդուն և հիմա այնտեղ նա նրան է պարզում իր բարի ժպիտը:

45 **Ո՞ր բառերն են կազմությամբ բարդ.**

1. մարդ-մուրդ, 2. ոչինչ, 3. տրտմաշուք, 4. հողմահարում, 5. անկյունագիծ, 6. սնանկ, 7. կարճալիք, 8. տեղատարափ, 9. հիմնարկ:

46 **Ո՞ր բառերի (բառակապակցությունների) միայն առաջին բաղադրիչն է գրվում *մեծատառով.***

1. ՊԱՐՍԻՑ ԾՈՑ, 2 . ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ,
3. ՀՅՈՒՍԻՍԱՏԼԱՆՏՅԱՆ ԴԱՇԻՆՔ, 4. ՀՌՈՄԵԱԿԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆ,
5. ՀԱՅԿԱԿԱՆ ՏԱՎՐՈՍ, 6. ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ, 7. ՀԱԿՈԲ ՄԵՂԱՊԱՐՏ,
8. ՊՈՂՈՍ ԱՌԱՔՅԱԼ, 9. ՎԱԶԳԵՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍ:

47 **Տրված բայաձևերից որո՞նց կազմությունն է սխալ.**

1. փախնել, 2. տուժվել է, 3. հեռացի՛, 4. մոտեցրո՛ւ, 5. թողող, 6. դիպել է, 7. մի՛ խոսա, 8. հիշեցրեցի, 9. խոնավացնող:

48 **Պնդումներից որո՞նք են սխալ Մ. Նալբանդյանի վերաբերյալ:**

1. Հայ գրական քննադատության հիմնադիրներից է:
2. Առաջին անգամ կիրառել է հայրենի չափը:
3. Աշխարհաբարով գրված առաջին գեղարվեստական ստեղծագործության հեղինակն է:
4. Գրել է միայն չափածո երկեր:

49 **Բարդ ստորադասական նախադասություններից որո՞նք են սխալ փոխակերպված պարզի:**

1. *Այն օրից, ինչ որդիս մեկնել է երկրից, կարոտի որդը բույն է դրել իմ սրտում:*
   Որդուս՝ երկրից մեկնելուց հետո կարոտի որդը բույն է դրել իմ սրտում:
2. *Ես, որ աշակերտել եմ թատերական արվեստի համաշխարհային դեմքերին, հայրենիքում անփոխարինելի դասեր էի առնում Արմենյանից:*
   Ես՝ թատերական արվեստի համաշխարհային դեմքերին աշակերտածս, հայրենիքում անփոխարինելի դասեր էի առնում Արմենյանից:
3. *Ծովն այնքան հանդարտ էր, որ թվում էր շքեղ կտավից իջած անշարժ պատկեր:*
   Ծովը շքեղ կտավից իջած անշարժ պատկեր թվալու չափ հանդարտ էր:
4. *Ես չեմ պատմում այն բանաստեղծի մասին, որ մակույկով ճեմելիս իրեն ծովն է նետել:*
   Ես չեմ պատմում բանաստեղծի՝ մակույկով ճեմելիս իրեն ծովը նետելու մասին:

50 **Ո՞ր նախադասություններն են գրաբարով:**

1. Ապա տայր հրաման Շապուհ արքայ Պարսից բերել շղթայս և արկանել ի պարանոցն Արշակայ:
2. Տե՛ր արքա, ավելի կը մեղանչես, երբ գահդ թափուր թողուս, որուն վրա միշտ հառած են Պարսկաստանի արյունռուշտ աչքերը:
3. Յետ այսօրիկ ապստամբեաց ի թագաւորին հայոց եւ ձեռին իշխանութեանն տանն հայոց թագավորին:
4. Եթող զարքայն Հայոց եւ գնաց Սաղամուտ տէր Անձտեաց, եւ ընդ նմին իշխանն Մեծի Ծոփաց:
5. Ճապղեր եմ ջրի նման, ի յօտար երկիր կու գնամ:

Բ մակարդակ

51 **Ո՞ր շարքի բոլոր բառերում է գրվում *մ:***

1) ա-բրոս, ա-պաճույճ, բա-բիշ, թ-բուկ
2) ը-բոշխնել, ա-բարիշտ, բա-բասել, ա-բարտակ
3) ա-բիոն, ա-բոխ, բա-բիռ, ա-բասիր
4) վերա-բարձ, թ-բլիկ, զա-բիկ, ա-բարբառ

52 **Ո՞ր շարքի բոլոր բառերի (կապակցությունների) բաղադրիչներն են գրվում *միասին:***

1) (սերնդե)սերունդ, քարե(դարյան), տարեց(տարի), նոր(ջուղայեցի)
2) վեց(հարկանի), այր(ու)ձի, ի(սպառ), քափ(քրտինք)
3) նոր(անկախ), ռոմանա(գերմանական), լեզվա(ոճական), ըստ(իս)
4) օրն(ի)բուն, խոսքի(մասային), հարավ(արևելյան), ի(լրումն)

53 **Ո՞ր շարքի բոլոր բառերն ունեն միևնույն ածանցը:**

1) ապերասան, ապառաժ, ապակատար
2) մոլորակ, խաժակ, խոյակ
3) ունակ, տեսակ, հարսնյակ
4) ապշահար, ապերախտ, ապառիկ

54 **Ո՞ր նախադասության մեջ բառագործածության սխալ կա:**

1) Ֆիզիկոսը Օքսֆորդի համալսարանից միջազգային գիտաժողովին մասնակցելու հրավեր էր ստացել:
2) Բազմազբաղ լինելու պատճառով ընկերս ստեպ-ստեպ է ամառանոց գալիս:
3) Կողմերի անպատասխանատվության և անփութության հետևանքով այդքան կարևոր պայմանագիրը լուծարվեց:
4) Ցոփ ու շվայտ կյանքով ապրող որդիները վերջնականապես սնանկացրին իրենց հորը:

55 **Ո՞ր նախադասության մեջ մակբայ կա:**

1) Մարիան մինչև վերջ չլսեց և շարունակելով իր մտքերի թելը՝ կրկին ինչ-որ հարց տվեց հարսին:
2) Վերին կարճ շուրթը մի ակնթարթ արագությամբ իջնում էր, դիպչում ստորին շուրթին և երևան հանում շողացող ժպիտը:
3) Ես սիրում եմ նստել ամեն իրիկուն Պատուհանիս առաջ երկար ժամեր:
4) Մի բան, ինչ ես սիրում էի այդ գեր ու կենսախինդ մարդու մեջ, այն էր, որ երբևէ ինձ խրատներ չէր տալիս, որը ինձ համար հազվագյուտ շնորհ էր:

56 **Ո՞ր նախադասության մեջ շաղկապի սխալ կիրառություն կա:**

1) Եթե փախստականները անմիջապես ճանապարհ ընկնեին, ապա ժամանակին կհասնեին քաղաք:
2) Նա ինչո՞ւ չառաջարկեց, որպեսզի այդ հարցն էլ ընդգրկվեր օրակարգում:
3) Այդ միջադեպը, որին նա պատահաբար էր ներկա գտնվել, թեև վաղուց էր կատարվել, սակայն չէր մոռացվել:
4) Դու ոչ միայն դրժել ես խոսքդ, այլև դիմել ես սադրանքների, համախմբել դավադիր իշխաններին:

57 **Ո՞ր նախադասության մեջ անկանոն բայ *չկա:***

1) Բայց աչքերը մեր արևներ չտեսան, Եվ մեր սրտերը՝ լուսավոր հեռուներ:
2) Էլի գարուն կգա, կբացվի վարդը:
3) Ամեն վայրկյան սիրով տրտում ասում եմ ես՝ մնաս բարով:
4) Դեպի արևը դարեր ու դարեր թռի՛ր, սլացի՛ր, ազնի՛վ քարավան:

58 **Ո՞ր նախադասության մեջ ներգործող խնդիր կա:**

1) Փոքրահասակներից մի քանիսը գոգնոցով իրենց դեմքը ծածկեցին և պահվեցին ինձանից:
2) Գյուղական գրագրի բղավոցից նա սթափվեց ու բեռը շալակին՝ վերադարձավ ձիու մոտ:
3) Դե իմ անունով երդվի՛ր, անզգա՛մ, Որ էլ Սարոյին դու չես սիրելու...
4) Տեսնելով կրկեսում վալս պարող այդ ձիուն՝ ես զգացի, որ ինձ համար թանկ է բեռնաձին, որ մշտապես քրքրվում է բոռերից:

59 **Բարդ նախադասություններից որի՞ ստորադաս նախադասության պաշտոնն է սխալ նշված:**

1) Զգացվում էր՝ Վահանն ասածիս վրա ինչ-որ բան էր մտմտում: *(ենթակա)*
2) Մինչև հիմա էլ ինձ թվում է, թե իմ այդ ստորագրությունը տպված էր ոսկե տառերով: *(ուղիղ խնդիր)*
3) Երեկոյան, երբ մենք բաց էինք թողնում մեր թռուցիկները, քաղաքի վրա կարծես լողում էին տասնյակ լուսիններ: *(բացահայտիչ)*
4) Հազրոյի հայրենիքը եղել էր քարոտ Սասունը՝ այդ խուլ երկրի ամենախուլ անկյունը, որտեղ ձորերը դառնում են կիրճեր, լեռների գագաթները՝ ապառաժներ: *(որոշիչ)*

60 **Ուղղակի խոսքի փոխակերպման ո՞ր տարբերակն է ճիշտ:**

- Տիկի՛ն, ես Ձեզ չեմ հասկանում և չեմ հավատում Ձեր անկեղծությանը,- ասաց երիտասարդը:

1) Երիտասարդն ասաց տիկնոջը, որ նա իրեն չի հասկանում և չի հավատում իր անկեղծությանը:
2) Երիտասարդը տիկնոջն ասաց, որ ինքը նրանց չի հասկանում և չի հավատում նրանց անկեղծությանը:
3) Երիտասարդը տիկնոջն ասաց, որ նա նրան չի հասկանում և չի հավատում նրա անկեղծությանը:
4) Երիտասարդն ասաց տիկնոջը, որ ինքը նրան չի հասկանում և չի հավատում նրա անկեղծությանը:

61 **Պնդումներից որո՞ւմ սխալ կա:**

1) Նորավեպը (նովել) փոքրածավալ արձակ ստեղծագործություն է, որտեղ գործողությունները զարգանում են արագ և սրընթաց: Այն ունենում է կտրուկ ու անսպասելի ավարտ:
2) Ողբերգությունը և կատակերգությունը պատկերում են կյանքի երկու ծայրաթևերը՝ ողբերգականը կամ ծիծաղելին:
3) Հայ գրականության մեջ քնարական պոեմի դասական օրինակներ են Ա. Իսահակյանի «Աբու-Լալա Մահարի» և Հ. Թումանյանի «Անուշ» պոեմները:
4) Առակը այլաբանական բովանդակությամբ փոքրածավալ ստեղծագործություն է և հաճախ ավարտվում է բարոյախրատական եզրակացությամբ:

62 **Ո՞ր բառն է բաց թողած:**

Աչքերը սև - ..... սև,
Արևների պես անշեջ,
Գալարում էր մեջքը թեթև
Ծաղկանկար շալի մեջ:

1) հակինթներ
2) արևներ
3) ողկույզներ
4) կայծակներ

63 **Բառազույգերից քանի՞սն են կազմված հոմանիշներից.**

սփոփել-ամոքել, ոստոստալ-դայլայլել, տարտամ-անորոշ, դրվատել-գովաբանել, ասպնջական-ժլատ, շաղակրատ–դատարկախոս, հերքել-ժխտել:

64 **Նախադասություններից քանիսո՞ւմ վաղակատար ձևաբայ (կախյալ դերբայ) կա:**

- Իջել է շուրջը մի անհուր իրիկնաժամ...
- Ինչպե՞ս կարող էր հանգիստ նստել, երբ արդեն գիտեր այդ մասին:
- Ես եղել եմ, կամ, կլինեմ հար ու հավետ, ինչ կա որ:
- Զորք ու բաբան խորտակվել են, Նրա բերդը՝ միշտ կանգուն:
- Ասել միայն բարի խոսքեր. Ահա մի բան, որ տրված չէ շատերին:

65 **Ընդգծվածներից քանի՞սն են ուղիղ խնդիր:**

Մոկաց իշխանը՝ Արտակը, իջավ նժույգից, <u>սանձը</u> տվեց <u>թիկնապահին</u> և զգուշորեն մոտեցավ այն <u>խրճիթին</u>, որտեղ թողել էր իր սիրած <u>աղջկան՝</u> <u>Անահիտին</u>, որը վաղուց կարոտ էր <u>ապաքինման</u>:

66 **Ո՞ր բառերում ածանցի հնչյունափոխություն կա.**

1. վարչություն, 2. վերնաշեն, 3. պատմաբան, 4. մարդկային, 5. խորհրդավոր, 6. ահագնանալ, 7. գետնամած, 8. աշխուժանալ, 9. մատուցարան:

67 **Ո՞ր նախադասություններում կետադրական սխալ կա:**

1. Դպրոցը գյուղի ցածրադիր մասում է՝ գետափին. մի քանի անգամ հեղեղը ներս էր լցվել, պատերը խոնավ էին ու տեղ-տեղ մգլած՝ քայքայված:
2. Պատահում էր՝ աչքերի փայլատակումին հաջորդում էր դանակի փայլատակում, և այդ երկու փայլակներին ընդառաջ էր գնում նա սրերից ավելի հզոր իր խոսքով, և տիրում էր խաղաղություն:
3. Չնայած նախընթաց ամբողջ օրը ճանապարհորդել էի՝ երեկ շատ վաղ արթնացա:
4. Դիլան դային տեսավ՝ ինչպես արնոտ միրհավը մամռոտ քարից վայր ընկավ թփուտների մեջ և ափսոսանքով նայեց միրհավի հետևից:
5. Միրհավն էր. զգույշ փոխում էր արնագույն տոտիկները և կտուցով փորփրում լորենու՝ վաղուց դեղնած տերևները:
6. Զգալով, որ իր գործը լավ է կատարել՝ Ամալյան մի անգամ էլ անթաքույց հաճույքով զննեց սեղանը՝ բաց չթողնելով ոչ մի մանրուք:

68 **Ո՞ր մտքերն են բխում տեքստի բովանդակությունից կամ *չեն* հակասում նրան:**

Պիզայի նշանավոր աշտարակը՝ Իտալիայի տեսարժան կոթողներից մեկը, որի շինարարության համար պահանջվել է մոտ 200 տարի, կառուցումից կարճ ժամանակ անց սկսել է թեքվել, և մինչև այժմ թեքման գործընթացն ավարտված չէ: Նրա թեքությունը անհանգստություն է պատճառում պատմամշակութային հնությունների պահպանման խնդիրներով զբաղվողներին: Ամբողջ աշխարհի գիտական միտքն այսօր միջոցներ է որոնում թեք աշտարակի շտկման համար:

Համանման աշտարակ կար Անգլիայում՝ Լոնդոնից 100 կմ հեռավորության վրա գտնվող գավառական մի քաղաքում: Դրա շինության հիմքում հողը մոտ երկու մետր փոս էր ընկել՝ մոտ հինգ աստիճանով թեքելով աշտարակի դիրքը: Կառույցը փրկելու նպատակով բնակիչները, որքան էլ տարօրինակ է, դիմել էին մի զինվորականի, որը ճարտարապետ չէր: Վերջինս, ուսումնասիրելով հիմքի հատվածը, եզրակացրել էր, որ աշտարակը կառուցված է հեղուկ պարունակող կավահողի վրա: Ժամանակի ընթացքում հեղուկը հոսել է, իսկ կավահողը՝ ծանրության պատճառով նստել: Նա հրահանգել է փոս ընկած մասի հակառակ կողմում փորել հողը, խողովակներով հեղուկը հանել և աշտարակի պատերից կախել մետաղյա ծանրոցներ: Զարմանալի է, բայց թեքությունը մի քանի ամսում շտկվել է, և աշտարակը մինչ օրս ուղիղ կանգնած է:

1. Շատերին ոգևորում է Պիզայի աշտարակի վերականգնման փորձը, սակայն այն կիրառելի չէ անգլիական աշտարակի նկատմամբ:
2. Անգլիական աշտարակի թեքությունը շտկվել է նրա՝ մոտ երկու մետր փոս ընկած մասի հակառակ կողմից ջրերը խողովակներով հանելու միջոցով:
3. Ի տարբերություն անգլիական աշտարակի՝ Պիզայի աշտարակը ի սկզբանե նախագծվել և կառուցվել է որպես թեք աշտարակ:
4. Պիզայի աշտարակի թեքման աստիճանը նույնն է, ինչ Լոնդոնից քիչ հեռու գտնվող աշտարակինը:
5. Անգլիական աշտարակի թեքվելու պատճառն այն էր, որ կառուցված էր հեղուկ պարունակող կավահողի վրա:

69 **Տրված 6 պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրել *Ճիշտ է, Սխալ է, Չգիտեմ* տարբերակներից որևէ մեկը:**

1. Բարդ նախադասությունների բաղադրիչ նախադասությունները կարող են միանալ շաղկապներով, հարաբերական դերանուններով կամ առանց դրանց:
2. Եթե բարդ նախադասության բաղադրիչ նախադասության կազմում կա ***որովհետև, թեև, որպեսզի*** շաղկապներից որևէ մեկը, ապա այդ նախադասությունը պարտադիր ստորադաս է:
3. Միևնույն բարդ նախադասության կազմում միաժամանակ չեն կարող լինել և՛ համադասությամբ, և՛ ստորադասությամբ կապված բաղադրիչ նախադասություններ:
4. Ոչ բոլոր բարդ ստորադասական նախադասություններն են փոխակերպվում պարզի:
5. ***Այս, այդ, այն*** ցուցական դերանունները գերադաս նախադասության կազմում կարող են հանդես գալ որպես հարաբերյալ:
6. Բարդ նախադասության կազմում չի կարող լինել միակազմ բաղադրիչ նախադասություն:

70

Տրված 6 պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրել *Ճիշտ է, Սխալ է, Չգիտեմ* տարբերակներից որևէ մեկը:

1. Բոլոր գոյականները թե՛ եզակիում, թե՛ հոգնակիում կարող են որոշիչ հոդ ստանալ:
2. ***Դ*** հոդը կարող է լինել ստացական կամ դիմորոշ:
3. Բաղաձայնով վերջացող բառը կարող է ձայնավորով սկսվող բառից առաջ ստանալ ***ը*** հոդ:
4. Գրական արևելահայերենում ստացական հոդ ունեցող բառը անձնական դերանվամբ հատկացուցիչ չի կարող ունենալ:
5. ***Ս*** հոդն արտահայտում է ցուցական և փոխադարձ դերանունների իմաստ:
6. ***Ս, դ*** հոդեր ունեցող գոյականները որոշյալ առման են: